Դանիել Վարուժան

Վանատուր

… Ամենաբեր նորոց պտղոց տօնից
հյուրընկալ դիցն Վանատրի.
ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ

Ելստած պարարտ եզիդ վրա, ո՛ Վանատուր,
Մեկ ծագեն մյուսը կանցնիս
Հայրենական դաշտերուն:
Մեռա՜ն բոլոր մեծ աստվածները, իրենց
Բագիններուն վրրա մամուռը կ'աճի:
Անմահ եղար դո՛ւն միայն
Ելման հողին և կըրակին, ու նըման
Օվկիանոսի աղերուն:
Ուսերուդ հիր պատմուճանեն դեռ կու գա
Գինիի հոտն Ամանորի տոներուն:
Հակառակ այնքա՜ն դարերու ավերին՝
Բիբերրդ դեռ զըվարթություն կը բըղխեն.
Ու կենեղուտ դեմքիդ վրա
Արբեցողի կարմիր ծիծաղն է ծեփված:
Ու երբ պարարտ եզիդ վըրա կ'այցելես,
Ծաղկամիսեն Միգաբեր,
Անեզրությունն հայրենական դաշտերուն՝
Կ'հոսի ալի՛քը կյանքին
Ակոսներեն հայրենակա՜ն դաշտերուն:

Ահա գարունն ու զարթումներն իր առույգ.
Հիրիկներո՞վ պըսակվե, ո՛ Վանատուր,
Ճամբուդ վրա ճառագայթներ կը հոսին
Երակներո՛ւդ պես զեղուն.
Եվ կը թաղվին կանանչին մեջ ցողաթուրմ
Բոլոր քարերն ըսպիտակ:
Կըտուրներեն գեղջկական
Կը բարձրանա ծուխը, խունկի պես խաղաղ:
Թող ես վարդով և ուլունքով գեղաշար
Քառամանյաըս կախեմ
Պարանոցեն քու եզիդ,
Հըլու եզիդ՝ որ դարձած՝
Մերթ կը լիզե բոպիկ ոտքերդ Աստվածի:
Օ՜, իր պոչյուը գերազոր, որ ահա
Քարանձավե քարանձավ
Կ'արթընցընե թըմրած օձերն ու արջերն,
Ու խաղաղ կյանքն արևուն տակ կը պոռթկա:
Ատղերը մեղը՛ր կը ծորեն երկընքեն
Նայադներու սափորներուն մեջ մարամար
Արշալուսված աղբյուրներուն եզերքին
Աղավնիներ կը լոգնան
Իրենց կտուցեն մարգարիտներ սըրսկելով:
Ծիծաղե՛, ո՛ Վանատուր,
Քու հեթանոս ծիծաղներովըդ վըճիտ,
Զի բընությունն արթընցա՛վ իր քողերեն.
Զի Բերկրությունն, արգասավոր և անհուն,
Օդին մեջեն կ'անցնի կ'երթա, նըման
Մեծ կարապի մը վայրի,
Քու հաղթանա՜կըդ կ'երգե:

Ահա ամառն ու իր անդերը խարտյաշ.
Որաներո՜վ պըսակվե, ո՛ Վանատուր:

Պրճեղներուն տակ եզիդ
Մատղաշ ցորյանն անտառացավ. այժըմ իր
Ծովերուն մեջ՝ ոսկյա լոգանքըդ ըրե՛:
Թուփերուն տակ ծաղկահեղց
Բույներն են լի՛ օրհնությամբ,
Եվ արտույտին երգն արևե՛ն մեզ կու գա:
Քու արգավանդ անույշ շունչդ է՝ որ կ'անցնի
Դալարավետ բըլուրներուն կողն ի վար:
Երդիքին վրա քընացող

Գեղջուկին աչքն ա՛լ կը բանա՝ Արշալույսն,
Եվ կը փակե՝ Լուսնկան:
Հյուղերն են լի համեմներու բույրերով,
Ավերակներն իսկ մոխրապատ՝ են զեղուն
Եղիճներու, մոլոշներու հունձքերով:
Ուռենիին տակ, Վանատո՛ւր, կը զոհեմ
Նոխազը, քեզ նըվիրված,
Քամակին վրա՝ ակոսի պես կը ճեղքվին.
Նոխա՛զն որ միշտ կը կըրծեր
Սուրբ շերտափակն այգիիդ:
Արյո՛ւն խըմե ու մի՛ս կեր, ո՛ Վանատուր,
Քու հինօրյա խըրախներովդ հեթանոս,
Ջի հասկաթուռ ցորյանին մեջ փայլակող
Գերանդիներ քե՛զ կ'երգեն:

Ահա աշունն ու արյուններն իր հուռթի.
Որթատունկո՞վ պըսակվե, ո՛ Վանատուր:
Նիզակըդ ա՛ռ, որուն վըրա ոլորուն
Բարունակներ կը ծաղկին.
Թող ես եզիդ եղջյուներն
Ողկույզներո՛վ զարդարեմ:
Մըրգածառերն, հըղի կընոջ մը նման,
Կ'հևան իրենց բեռին տակ.

Բուներն համակ կըպչուն են քա՛ղցը հույզով.
Կորիզն ամեն պըտուղի
Քու սերմովդ է պընդացած.
Եվ քու եզիդ շողիքով
Օծված է հողը բեղուն:
Ամբարներն ողջ՝ խաղաղությամբ կը լեցվին,
Եվ կարասներ՝ ցընծությամբ…
Թող, թեղերուն մեջ, ուտե եզըդ գարի՛ն
Աստղերու պես: Իսկ դուն, Աստվածըդ զըվարթ,
Աստվածըդ գեր, վարդերես,
Ա՛ռ դաշխուրանդ, ըմպե՛ այրունը աշնան:
Աղբյուրին քով ես քեզի
Մատրովակեմ թող գինի՛,
Մատրովակեմ թող բոցե՛ր,
Ծիծաղե՛, ո՛ Վանատուր,
Ո՛ Վանատուր, կաքավե՛.
Ջի այգիեն տերևաթափ՝ կ'երևան
Հավերժահարսերն, երկայնքն ի վեր ցանկերուն,
Եվ աղջիկներ, նուռ լեցուցած զոգերնին,
Դեպի մեհանըդ կ'երթան.
Ջի դու անմահ ես՝ դիքերեն վերջ մեռած՝
Օվկիաններու աղին պես,
Ջի տաղտկալի ձըմրան մեջ,
Հայրենական օճախներուն քով խաղաղ,
Ամեն կիթառ քե՛զ կ'երգե: